Արձանագրություն N5
<<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05.05. 2018թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Վ. Օհանջանյանը, Հ. Սիրունյանը և Վ. Սարգսյանը,
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը,

1. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ 1-6 ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով մրցույթի 1-6 չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած <<Աննա 80>> ՍՊԸ-ի կողմից հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (այդ թվում 04.05.2018թ. գնահատող հանձնաժողովի N4 արձանագրությամբ պահանջված և Ընկերության կողմից 05.05.2018թ. ներկայացված լրացուցիչ փաստաթղթերի) ուսումնասիրության վերաբերյալ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Ա. Բալայանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ <<Աննա 80>> ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը: Փաստաթղթերի ուսումնասիրության և քննարկման արդյունքում որոշվեց, որ <<Աննա 80>> ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված պահանջներին.

1. հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագրի պահանջի բավարարման համար ներկայացված 4 պայմանագրերից երեքը չեն կարող համարվել նմանատիպ, իսկ <<ԵՔ-ԲԸԱԾՁԲ-17/70>> ծածկագրով պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտը,

2. կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները և քանակը չեն համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 2-րդ ենթակետի պահանջներին (ներկայացված հորատող մեքենայի տեխնիկական տվյալները չեն համապատասխանում, և ներկայացված չեն կոմպրեսոր և եռակցող ապարատների վերաբերյալ տվյալներ),

3. Ներկայացված մասնագետների որակավորումը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պայմանագրի կատարման համար ներկայացված <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի պահանջներին:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել <<Աննա 80>> ՍՊԸ-ի հայտը՝ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշներին անհամապատասխանության հիմքով,

2. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով ընթացակարգի մյուս մասնակիցներին <<Արտեզիա>> ՍՊԸ-ին, <<Հորատանցք>> ՍՊԸ և <<Էկոէլ>> ՍՊԸ-ին, Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ին և <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների առաջարկված գների նվազեցման նպատակով, որը տեղի կունենա 08.05.2018թ.-ին ժամը 11:00-ին ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի շենքում (Վարդանանց 13-ա):

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____Ա. Բալայան

_____Է. Մխիթարյան

Անդամներ _____Վ. Օհանջանյան

_____Հ. Սիրունյան

_____Վ. Սարգսյան

Քարտուղար _____Ա. Սարգսյան